


Ո. ԱՐՄԵՆԻԱՆ



ԸՆՏԱԿԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՔՈՍԵ

ԳՅՈՒՂԱՑՆ ՏԵՐԱԿՈՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ


Սետեմբեր

1985



ԸՆՏԱԿԻ ԱՆԱՍՈՒՆԵՐԻ
ՔՈՍԸ

19336
Դ 24315



ԳՅՈՒՂԱՎԱՏԱՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բ'ԵԶ Ե ՔԱՅԵ

Քոսն պուած ե դալիս փոքրիկ, աչքով անտեսանելի տիղնրից, վոր կարելի յև տեսնել խոշորացաւյցի ոգնությամբ:

Քոսն առաջ ըերող տիզերը մի քանի տասակ են լինում, վօմանք ապրում են մաշկի մեջ և այնաեղ իրենց համար ճանապարհներ են փորում, իսկ վօմանք ել ապրում են մաշկի յերեսը, կամ մազերի արմատներում, վօրոնք մաշկի քոր ու անհանդստություն են առաջացնում՝ մանավանդ դիշերներն ու տաք յեղանակներին: Այդ ակնդըրը դրդելով մաշկը՝ բորբոքման պատճառն են դառնում և առաջացրած քորի պատճառով վերքեր, խոցեր են առաջ ըերում:

Քոսն, ուրեմն, առաջ ե դալիս միայն տիզերից: Տիզերը կենդանուց, վարակված վայրերից կամ իրերից անցնում են առողջներին ու վարակում նրանց:

Մի եղ տիզը 15.000—20.000 ձու յէ ածում, վորոնցից 5—8 որ հետո զուրս են դալիս թրթուրներ: Այդ թրթուրները 15—17 որ հետո չափահաս տիզ են դառնում և արդեն կարող են սերունդ տալ: Հստ կատարված հաշիվների, մի զույգ հասի տիզ 3 տամսվա ընթացքում կարող ե մեկ ու կես միլիոն ձու ածել:


Տիզերն անասունի մարմնից դուրս՝ չոր տեղերում, ապրում են 2—3 շաբաթ, իսկ խոնավ անդերում՝ 6—8 շաբաթ:

Բոլոր տեսակի անասունները քոսով հիվանդանում են, և յուրաքանչյուր տեսակի անասունն ունի իրեն հատուկ քոս առաջացնող տիզերի տեսակ: Այնուամենայնիվ մի տեսակի անասունի քոսը կարող ե անցնել մյուս տեսակի

անասուններին, կամ անասուններից կարող են անցնել մարդուն, և հակառակը:

Քոս առաջացնող տիղերն ընդհանրապես բաժանվում են յերեք տեսակի, վորոնք իրենց զենսարանական համակալվություններով իրարից վորոշ չափով տարբերվում են:

1. Քորեցնող տիզն (կլեպ աւծեն) ապրում ե կաշվի վերնամաշկի մեջ և այսաեղ ել իր համար անցքեր և փոքրում: Տիզն սկսում ե տարածվել անասունի մաքմակ մաղուղի մասերից:




Նկ. 1. Քորեցնող տիզ

2. Անտմակային տիզն (կլեպ ռակօջնիկ) ապրում և մարմնի առավելագույն պաշտպանված, այսինքն՝ տառամադուլ ծածկված մասերում՝ մաշկի մակերեսի վրա, և սընվում և արյունով ու ամիշով (տես Նկ. 2):

3. Մակակերտ տիզը (կլեպ կօյեա) նույնպես մաշկի մակերեսի վրա յե ապրում, սակայն սնվում և վերնամաշկի քիշներով և այդ սականառութ վերնամաշկը քայլայում եւ հիվանդությունն սկսում ե տարածվել վոտների ստորին մասերից, պոչի արմատի վրայից և շների ականջից (տես Նկ. 3):

Քոսի նշաններն ու հիվանդության ընթացքը, ըստ անասունների տեսակի, և նայած թե վոր տեսակի տիզերից և առաջացնել, վորոշ չափով իրարից տարբերվում են: Քոս հիվանդությունը ճանանչելն առհասարակ դժվար

չե. Նույն մոր հիվանդությունը վարակիչ է, մի անասունի վրա շատ արագ կերպով և տարածվում և հիվանդ անասունից անցնում և առաղջն, յերկրորդ՝ մաշկի վրա մի շաբթ կարմիր կնառքը, բշամիկներ են գոյանում, մաշկն սըկում է թեփուուն և կեղև կապեր Թոսով հիվանդանալիս անասունը ստատիկ քորվում և, մանավանդ գիշերներն ու տաք տեղերում, նունիսկ կրծուում և վարակված տեղերը, մազերն սկսում են թափիվել, մաշկը բռըբռքիւմ և և գրան վերքեր են գոյանում, և այս դրությամբ հիվանդությունը շարունակվում և Անասունն ստահճանարար նիճարում և և յերրելին ել, նույնիսկ, արյան պակասության պատճառով ստոկում:



Նկ. 2. Վերմուկոյլի սիզ

Նկ. 3. Մազկակիր սիզ

Այժմ համառատ կերպով կանդ առնենք տարբեր տեսակի անասունների՝ ձիերի, խոշոր յեղջերավոր անասունների և վաշխարնների քոսի վրա:

ՁԵՐԻ ԳՈՅՆ

Ջիշը ունեն յերեք անսակի քոս:

Յուրաքանչյուր տեսակի քոս առաջացնող տիպը տարբեր և լինում:

Առողջ ձիերը քոսով վարակվում են հիվանդ ձիերից, դանագան անասուններից, վարակված ձիասարքերից, վարակված գոմերում գտնված իրերից, ցամքարից, ինչպես նուև մարդկանցից և այլն:

Քորեցնող տիզի առաջացրած քոսն սկսում և ձիու
մարմնի այն մասերից, վորոնք ձիասարքերի հետ շփում են
ունենում, որինակ՝ գլխից, վզից, ուսից, թիկունքից, իսկ
այսուհետեւ տրագորեն տարածվում ե մարմնի վրա։ Մարմնի
վարակված մասը խիստ քոր և դալիս, մանավանդ գիշեր-
ները, տաք գոմերում կամ արեի տակ և կամ մարմնը
ծածկված լինելու դեպքում։ Զինըն իրենք իրենց քորում են,
մաշկը վիրավորվում ե. մաշկի վրա լիի կծածի նման մի
շաբք կարմիք կետեր կամ ջրուռուցներ են գոյանում, վո-
րոնք յերենմն բացվում են և միջից հեղուկ և դուքս դալիս,
մազերն իրար են կպչում և մասամբ թափուլում են, հեղուկը
չորանալով, կեղեննը և առաջացնում, կաշին աստիճանաբար
կոշտանում ե, ճաքճքում, և անասթանը հետզհետենինարում ե։

Վերմաւեկային տիզի առաջ բերած քոսը լինում և
ձիերի մարմնի պաշտպանված մասերում, որինակ՝ բաշի վրա,
պոչի վրա, ծնոտի տակ և այլն, Հիվանդության նշանները
նույնն են, Քոսի այս տեսակը համեմատաբար դանդաղ և
տարածվում է, ճաքճքում, և անասթանը հետզհետենինարում ե։

Մաւեկայից տիզի առաջ բերած քոսը լինում և ձիու
վոտքերի վրա։ Վոտքերի վարի մասերից սկսում և և աստի-
ճանաբար վեր և բարձրանում։ Քորվելու ժամանակ ձին
աշխատում և վարակված տեղերն ատամներով բռնել, այդ
պատճառով ել այդ տեղերն ուռչում, մազերը թափում,
կեղեւ և կապում և կաշին կոշտանում ե։


ԱՌԵԽԱՐՆԵՐԻ ՔԱՅԼ

Վոչխարները նույնպես հիվանդանում են յերեք տե-
սակի քոսով։

Քորեցնող տիզի առաջ բերած քոսը լինում և վոչխար-
ների գլխի վրա՝ ըրբազուրկ մազերում։ Այս տիզերը ըլլ-
դով ծածկված մասերում չեն լինում։ Վարակված տեղը
միշտ քոր և դալիս, վորի պատճառով անասունը քսվում է

այս ու այն կողմ և դրա հետեւանքով առաջանում են վերքեր, վորոնցից արյուն և դալիս և չորանալով՝ ու գույնի կեղևներ և կապում. յերբեմն ել վերքն անցնում և վոչխորի աչքը և անասունի կուրանալու պատճառ և լինում:

Վերմաշկային տիղի առաջացրած բոսը լինում և վոչխարի ըրդով ծածկված մասներում, վորի համար և հաճախ չի նկատվում. Վոչխարի քոսի այս տեսակը մեծ արագությամբ մի վոչխարից մյուսին և անցնում. Հիվանդությունը նկատվում է այն ժամանակ, յերբ վոչխարի բուրդը թաղիքի (քեչայի) նման և դառնում և խառնվում իրար. Հիվանդի մարմինը սաստիկ քոր և գալիս, և անասունն այս ու այն կողմն և քսվում, կծոտում և մարմնի վարակված տեղերն ու վրայի բուրդը փրցնում:



Նկ. 4. Քառովլ վարակված վոչխար

Այս տեսակի քոսն սկսում է մեջքի ուղղությամբ. Կաշվի վրա մանր, զեղնագույն ուռուցքներ են լինում, վորոնք բազմանալով միանում են և կեղև են կապում. Այս կեղևները գնալով հաստանում են, տարածվում են մարմնի վրա, և վոչխարի բուրդն սկսում է թափվել. յերբեմն կաշին, հաստանալու հետևանքով, ինքն իր վրա յե ծալվում. Ցեթե վոչխարների մի մասը խուզվում է, տիղերը խուզված վոչխարներից անցնում են շխուզված վոչխարների վրա (տես նկ. 4):

Վաշխարի քոսի այս տեսակը խիստ մեծ մնաներ է հասցնում, և անասունը ստուիկ նիհարում և նդ վահխար-նեցը հաճախ թույլ և նիհարակաղմ դառներ են ծնում, իսմ պիտում են թրդի մեծ մասն անպետքանում, փշա-նում և Վատ յեղանակներին կորումն ավելի մեծ և լի-նում. հիվանդնեցի ՀՕ—ՔԸ տոկոսը կարող և ստուկեր Խոկ յեթե վոշխարները միաժամանակ նուև քափանակով են վարակված լինում, կորսուի տոկոսն ավելի յե բարձրա-նում. Հիվանդության ավելի յենթակա յեն նուրբ բուրդ ունեցող վաշխարները, խոկ պատճեռը շատ արագ կերպով նիհարում են ու ստուկում.

Մաշկակիր տիզից առաջացագ վաշխարի քոսն ավելի քիչ և պատահում. Հիվանդությունը յերեսում և զվասպորա-պես վատճերի վրա.

ԽԱՅԱՐ ՑԵՇՆԵՐԱՎԱՐ ՑՆԵՍԱԽՆԵՐԻ ՑԱՆԿ

Խոշոր յեղվերավար անասունները նույնպես կարող են հիվանդանալ յերեք տեսակ քոսով, բայց ամենատիտանզա-վորը վերամշկային տիզից առաջացած քոսն և վերշինու առաջանում և վերի վերին յեզերքի վրա, յեղջյուղների ար-մատում, մեջքի վրա և վզի յերկու կողմերը Անասունի մակերն աստիճանաբար թափառում են, կաշի վրա հան-գույցներ, բաշիկներ, հաստ կերպներ են զոյանաւմ, կաշին հաստանում և, կոշտանում և վրան ծալքեր են զոյանաւմ. Թորքերու պատճառով առաջանում են վերքեր, անասուն-ները հետզհնուեն նիհարում են, և յեթե լավ չմնամին, կարող են ստուկեր Հիվանդությունն ավելի վատճապավոր և, մանավանդ հորթերի համար. յեթե ժամանակին շրուժ-վեն և չխնամվեն, աստիկորներ ավելի շատ են լինում:

Քոսով հիվանդանում են նուև, խոչպես վերեւում ասացինք, մյուս ըստանի կենդանիները, թոշունները, խոչ-պես և մարդիկ:

ՅԱՄԻ ՏԵՐԵՆԴԱՆԻՑ

Խնչալես տնօսանց, քոսն առաջ են բերում հասուեկ տիպեր։ Առանց այդ տիպերի քոս չի կազող տուաջանապր

Թոսի տիպերը հիվանդ անտառուններից տոռդջներին անցնում են ուղղակի շվման միջոցով, կամ յերբ առողջ անտառունները պահպանում են վարակված շինություններում, վարակված արտավայրերում, կամ շփմամ են վարակված իրերի հետ, որինուէ դույլերի, կտորերի, անտառուններին խնամելու համար գործածվազ զանազան իրերի և այլն։ Թոսի տարածմանը նպաստում են վարակված լճառարքերը, խնամեադ մարդկանց հագուստները, հիվանդների համար գործածված ցամքարը, կերի ֆացորդները, վարակված աղըը, թրիժը և մերջապես, շներն ու հավերը։ Թոսը տարածվում և ոլուակըրապես ձեմովա ամբաններին, վարովներն անտառունները զամերում են գոնզիւմ և շատ հեշտությամբ իրաք վարակված են։ Գոմերը կեղտոտ պահնելը խոշոր չափով նպաստում ե քոսի տարածմանը։ Նիհար և սովոր անտառունները, ինչպես նուև գոտներն ու հորթերն ավելի ծոնը են հիվանդանում, և անուշառիր խնամելու դեպքում նրանց մնաց մասը սատկում են։

ՊԱՏՐԱՐ ՅԱՄԻ ԴԵՅ

Թոսի դեմ պայքարը տեսաք և տարվի յերկու ուղղությամբ, տուաջինը նախաղդուշական միջոցառումներն են, վորի շնորհիլ անտօք և կանխովի առողջ անտառունների վարակումը և հիվանդության տարածումը, իսկ յերկրորդը հիվանդների ըուժումն են։

ՆԱԽԱՂԴՈՒԹՅԱԿԵՆ ՄՐԱՋԵՆԵՐ

Խնչալես բոլոր հիվանդությունների ժամանակի, այսանուն ել պետք և շեշտենք, վոր ավելի հեշտ և և տնտեսապես ավելի ձեռնառ՝ կանխել հիվանդության տուաջումը,

այսինքն՝ շթողնել, վոր առողջ անասունները վարակվեն, քան թե հիվանդներին բուժել և հիվանդությունը վերացնել, վոր հաճախ ավելի դժվար է, ավելի մնջ աշխատանք ե պահանջում և անտեսապես ավելի թանգ ե նստում: Նախադդուշական միջոցները հետևյալն են.

Քոսից աղատ անտեսությունները, հիվանդության մուտքը կանխելու նպատակով խստիվ պետք ե հետևեն, վոր ուրիշ վայրերից անասուն ընթելու դեպքում նրանց միջոցով քոսը մուտք չդորձի տնտեսության մեջ: Դրա համար անհրաժեշտ է, վոր քոսով վարակված տեղերից անասուն ջերպի: Ավելի ապահով լինելու համար, նույնիսկ քոսից տղատ վայրերից քերված անասուններն առնվազն 14 որ պետք ե պահել առանձին, և միայն այն դեպքում թռողարեն խառնել անաեսության այլ անասունների հետ, յերբ նրանց վրա հիվանդության վոչ մի կասկածելի նշան չկատ Այս արօտավայրերում, վորտեղ քոսով հիվանդ անտոսուններ են արածել, առողջ անասուններին վոչ մի դեպքում չպետք և արածեցնել: Առողջ անասուններին նույնպես չպետք և ջրել այն ջրելու տեղերում, վորտեղից ոգտվում են նաև քոսով հիվանդ անասունները: Առողջ անասուններին խնամող մարդիկ բոլորովին չպետք ե մուտք ունենան հիվանդ անասունների գտնված վայրերը: Քոսով հիվանդ անասունները, մինչ նրանց լրիվ բուժվելը, վոչ մի գեղջում չպետք ե ուղարկվեն արօտավայր: Մի խոսքով, պետք ե բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի առողջ անասունները, նրանց խնամող մարդիկ, ինչպես նաև նրանց համար դարձածվող իրերը, վոչ մի շփում չունենան հիվանդ անասունների հետ, նրանց գտնված վայրերի հետ, վարակված իրերի և հիվանդներին խնամող մարդկանց հետ:

Ի՞ՆՉ ՊԵՏԸ Ե ԱՆԵԼ, ՅԵՐՔ ԱՐԴԵՆ ՄԻ ՑԱՇԵՍԱԽԹՅԱՆ
ՄԵԶ ՔՈՍ Ե ՀԱՅՅԱԲԵՐՎԱԵԼ

Յերբ մի տնտեսության անասունների մեջ քոս է նկատվում, ինչ տեսակի անասուն ել լինի, պետք եւ ամենից առաջ աշխատել, վոր հիվանդությունը չտարածվի, մեծ ծավալ չսատանա: Վարակված վայրերը, գոմերը, փարախանները պետք եւ մաքրել, աղբը, կերի մնացորդները, ցամքարն այրել, վարակված իրերը պետք եւ տխտահանել ախտահանիչ նյութերով կամ յեռացնելով: Հիվանդ անասուններին հատուկ խնամող պետք եւ կցել, առանձնացնել դրանց համար հատուկ արտահագուստ, վորը պետք եւ գործածվի միայն վարակված անասուններին խնամելու ժամանակ: Հիվանդներին խնամողները միաժամանակ պետք եւ հետևեն, վոր իրենք ևս չվարակվեն քոսով և յուրաքանչյուր անդամ նրանք պետք եւ իրենց ձեռները ալտահանեն ու լվանան գոլ ջրով ու ռճառուի մնամողները վոչ մի շփում չպետք եւ ունենան առողջ անասունների, նըրանց շինությունների և իրերի հետ վարակված վայրի և վտանդի յենթակա վայրերի սահմաններում բոլոր շները պետք եւ կապված պահին, իսկ հավերին չպետք եւ թողնել վարակված տեղերում ման զալ:

Հիվանդ անասուններին առատ և մննդարար կեր սկսած եւ տալ, վորովհետեւ քոսի տիզերն ապրելով անասունի մարմի: վրա՝ մնվում են նրա հաշվին և սաստիկ նիհարեցնում են նրան:

Հիվանդները բուժվում են՝ նայած հիվանդության չափին ու վարակման աստիճանին՝ զանազան դեղորայքով և զանազան յեղանակներով:

ՔՈՍԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Բոլոր տեսակի անասունների քոսի բուժումը հիմնված է միենույն սկզբունքի: վրա, այն ե՝ վոչնչացնել մարմի: վրա գտնվող քոսի տիզերը: Բուժումն ընդհանրապես կա-

տարրվում և յերկու հիմնական ձևով՝ անհատական և մաս-
սայական:

Առանձին հիմնանդ անասումներին բռւժելու համար ա-
նասումի վարակիված մասին քսում են մի վորեն ախտա-
հանիչ դեղ, վորն սպանում և ախզերին:

Անհատական բռւժումը կարելի յև կիրառել գլխավարա-
պես խոշոր յեղջերավոր անասումների վերաբերյալ իսկ
վոչխարների վերաբերյալ նման ձևի բռւժումը հաճախ
արդեն դռափի չափով տարածվել է: Դրա համար ել վոչ-
խարների վերաբերյալ կիրառվում և առաջնառութեան մաս-
սայական բռւժման ձևը, այսինքն՝ բոլոր վաշխարները լո-
ղացնում են ախտահանիչ լուծույթի մեջ՝ հատուկ պատ-
րաստված ավագաններում, կամ գաղային հատուկ կա-
մերաններում՝ նրանց յենթարկում են ծծմբագաղի աղղե-
ցության:

Բոլոր ախտահանիչ նյութերն ազդում են միայն քորի-
տիզերի վրա, սակայն չեն վաշխացնում տիղերի ձվերը: Այդ
ձվերից դուրս են զալիս նոր տիղեր: Հետևաբար՝ բռւժումն
առհասպակ 8—10 որովա ընդունումով մի քանի անգամ
պետք է կրկնվի, վորպեսդի ձվերից դուրս յեկած նոր
տիղերը նույնպես վաշխանան:

Բուշ բռւժելու համար կարելի յև դրոծածել մի շարք
ախտահանիչ դեղեր: Բնդիմներապես, իրակ կանան, զեղո-
րացը գրծածելուց առաջ, յեթե վարակված մասը փոքր
տարածություն և բռնում, այդ անդի մազերը, բնշպես նաև
նոան շրջապատող առողջ մասերից մի քանի սանտիմետր
լայնությամբ յեղած մազերը պնդոք և խուզել, իսկ յեթե
վարակված մասը մեծ տարածություն և բռնում, պետք և
խուզել ամբողջ մաշմախ մազերը: Վարակված մասի մը
պետք և քսել լիզոլ կամ կրիոլին՝ ավելացրած կանաչ
սապոն, իսկ հետո 24 ժամ ազատ թողնել, վօրից հետո
խոզանկով պետք և լվանու և հեղեները մաքրել:

Դըանից հետո պետք եւ քսել հետեւյալ դեղերից մեկը՝
ա) Մուշինի լինիմենը

Կարբուլաթթու	1	մաս
Կընովին	2	»
Բևեկնայուղ (ակիովիդար)	2	»
Ռասու	20	»
Զուր	100	»

Ցեթեւ անասունի ամբողջ մարմինը պիտի քսվի, նաև՝
առաջին որը պետք եւ քսել մարմնի կես մասը, իսկ յերկ-
րորդ որը՝ մյուս կեսը. Այս ձևով բուժումը պետք եւ կըրկ-
նել 8—10 որ հետո:

բ) Վեճական լինիմեն

Սև ձյութ (գյուղում)	1	մաս
Ծծումբ	1	»
Կանաչ սապօն	2	»
Սպիրտ	2	»

Ցեթեւ քսու մարմնի վրա շատ եւ տարածված, պետք եւ
քսել 3 անգամով. առաջին որը՝ մարմնի մի յերբորդական
մասը, յերկրորդ որը՝ յերկրորդ մասը և յերրորդ որը՝
մեացած յերբորք մասը: 8—10 որ հետո բուժումը միւ-
նույն ձևով պետք եւ կըրկնել:

զ) Կրեոլինի 5% -ային եմուլսիա

Կրեոլին	500,0
Կանաչ սապօն	100,0—200,0
Զուր	10,000,0

Այս հեղուկով պետք եւ լվալ անասունի ամբողջ մար-
մինը: Բուժումը 8—10 որ ընդմիջումով պետք եւ կըրկնել
սովորաբար յերեք անգամ:

դ) Սև ձյութ	2	մաս
Կանաչ սապօն	3	»

Սովորական	3	մաս
Զուր	10	»

Դեղը պետք է քսել վարակված տեղերին. 2—3 որ հետո պետք ն լվանում և բուժումը կրկնել մինչև անասունի չափանալը:

ե) Նախթ	1	մաս
Բննդին	1	»
Զեթ	1	»

Դրա վրա ազեւցանել կանաչ սալոն և սովորությունն ու սպառությունը վերցնել իրար հավասար չափով և այդ խառնուրդից ավելացնել այնքան, վորքան անհրաժեշտ կլինի, մինչև վար խմորանման մի խառնուրդ ստացվի:

զ) Կրեռլին	1	մաս
Կանաչ սալոն	20	»
է) Կրեռլին կամ լիզու	1	մաս
Հասարակ սովորակ	1	»
Կանաչ սալոն	8	»

Վերոհիշյալ դեղերը քանիուց 5—6 որ հետո հարկագոր և գաղջ (գոր) ջրով և կանաչ սալոնով լվանալ, կաշին մաքրել կեղեներից և սովորաբար կրկնել 2—3 անգամ:

Բայցի վերոհիշյալներից, կարելի յե գործածել նաև մի շարք այլ աշխահանիչ միջոցներ՝ մօխրաջուր, ծխախոտի հեղուկ և այլն, սակայն ավելի լավ և դիմել անամարտութիւն և նրա խորհրդով դիմել այս կամ այն միջոցին:

Զիերին քոոր բուժնու համար գործածվում և նաև հիպոտուլիտ (ծծմբանատր) և աղաթթու՝ հետեւյալ ձևով:

ՀՕՇ հիպոսուլիտ լուծվում է 400,0 դրամ տաք ջրի մեջ, վարից ստացվում է հիպոսուլֆիտի 60 % լուծույթ: Պատրաստվում է նաև աղաթթովի 10 % լուծույթ, վորը համար 100,0 աղաթթուն լուծվում է 900,0 ջրի մեջ: Միջն հաշվով մ.կ գլխի համար գործածվում է 1—1,5 լիտր

հիպոսուլֆիտի լուծույթն և 1—1,4 աղաթթվի լուծույթն:

Անաստանի վարակված մասնը մազը պետք է խօսել, լիմանակ գաղջ ջրով և կեղևները վարակված մասի վրայից մաքրելու Առաջին հերթին ձիու վրձինով պիտի քսել հիպոսուլֆիտի հեղուկը ամբողջ մաքմակ վրա՝ ակսելով դլիմից և թողնել 1—1 $\frac{1}{2}$ ժամ, վորպեսզի լավ չորանաւ. մաքմակ վրա դրյանում և հիպոսուլֆիտի բյուրեղների մի շերտ. Դրանից հետո միմնույն վրձինով պետք եւ քսել աղաթթվի լուծույթը՝ նույնպես ամբողջ մաքմակ մակերեսի վրա Դրա հետևանքով ձիու մաքմակ վրայից սկսում է հոսել դեղնապույն ծծմբադադիր հոսանքի հունեցող մի հեղուկը Յուրաքանչյուր լուծույթը քսելու համար պահանջվում է 25—30 րոպե ժամանակ. Մեկուկիսից—յերկու ժամ հետո, յերբ ձիու մաքմակը լավ չորանում է, միմնույն ձևով պետք եւ կրկնել բուժումը, այսինքն քսել հիպոսուլֆիտի լուծույթ և չորանալուց հետո՝ աղաթթվի լուծույթ։ Այս գործողությունը պետք եւ կրկնել չորս անգամ, միմնույն որվա ընթացքում (իսկ յեթե այդ հարավոր չե, յերկու որվա ընթացքում՝ որական յերկու անգամ)։ Այսպիսի բուժումը պետք եւ կատարել յերկու որ հաջորդաբար՝ որական չորս անգամ։ Մանր դեղնքերում 1—2 որվա հանգստից հետո, բուժումը պետք եւ կրկնել՝ նորից քսելով յերկու որ՝ որական չորս անգամ։ Դրանից հետո ձիուն յերկու որ պետք եւ հանդիսաւ տալ և հետո գաղջ ջրով լվանալու

ՄԱՍՈՍԵՎԵՆ ԲԱԽՄԱՆ ՇԻՋՈՑՆԵՐԸ


Քոսի մասսայական բուժման համար գործածում են հատուկ գաղային կամերներ, կամ հատուկ սարքած ավազաններ։

ԴԱԶԱՑԻՆ ԿԱՄԵՐՆԵՐԻ

Գաղային կամերները հատուկ արկղներ կամ փոքր կամերներ են, վորտեղ քսովվ հիվանդ անաստաները յեն-

թարկվում են տիղերին վոչնչացնող ծծմբադաղի աղջկցության:

Դաղային կամերները պատրաստվում են խոշոր կամ մանր անասունների համար: Մանը անասունների, որինակ՝ վոչխարների գաղային կամերները հաճախ կառուցվում են մի քանի զինի համար (տես նկ.5):



Նկ. 5. Գաղակամերային բուժում

Գաղային կամերներն ամեն կողմից պետք է ամուր փակված լինեն, վոր գագը չկարողանա կամերից դուրս դալ, իսկ անասունի դրուխը պետք է կամերից դուրս մնա, հակառակ դեպքում՝ անասունը դադից կիսեղովին:

Անասուններին նախքան կամերա մտցնելը, նրանց ուսային անցքի և հնատանցքի յնդերձները վագնին ուետք և քսել: Անասունին կամերում ծծմբադաղի աղջկցնելթյան տակ պետք է թողնել 45 րոպե: Դրանից հետո անասունը շուտով և զգուշությամբ կամերից դուրս պետք է հանել, վերպեսազի զադ չներշնչի և չխեղովին:

Ծծմբադաղ ստանալու համար կարելի յեւ ուղակի ծծումբ այրելու Այդ գագը կարելի յեւ ձեռք բերել նաև պատրաստի վիճակում և մի անցքի միջոցով շաց թողնել կամերի մեջ: Ծծումբն այրելու համար կամերի հետեւում սարքվում է մի փոքր յերկաթե վառարան:

Եթե վորովինետե անասունի գլուխը մնում է դուրս և չի յենթաքիվում դադի աղջկցության, հարկավոր է կամե-

բայից հանելուց հետո, պլուխը բռւժել հակաքոսային դեղուրայը:


Գաղակամերային ձևի բռւժումը նույնպես անհրաժեշտ է 7—8 որ հետո կը կնել, վորովհեան դազը թեև տեղերին վոչչացնում է, սակայն բոլորովին չի վոչչացնում հրանց ձվերը:

Գաղային կամերան քոսի բռւժման համար մի հիմական միջոց եր, մասայիսնդ ձիերի վերաբերյալ, բայց վորովհետեւ մի կամերն որական 20—25 զլուխ անառուն հազիվ կարող ե բաց թողնել, հետեարար՝ մեծ թվով հիվանդներ լինելու դեպքում, մասնավորապես վոչչարների վերաբերյալ, անհարմար է նրա գործադրությունը:

Վոչչարների մասսայական բռւժման համար ավելի նպատակահարմար է հակաքոսային ավագանը:

ՀԱԿԱՔՈՍԱՅԻՆ ԱՎԱԳԱՆ

Վոչչարների քոսի մասսայական բռւժման համար ավելի հարմար և ձեռնուու յե նրանց լրգացնել հասառել ավագաններում օխտահանել հակաքոսային լրւժութների մեջ։ Այս ձեր նպատակահարմար է նաև այն տեսակետից, վոր անառունի թե զլուխը և թե մարմինը միաժամանակ յենթարկվում են դեղորայքի ներդրության:




Նկ. 6. Լոգառանի հատուկագիծը

Ավագանները պետք ե ողատրաստել ցեմենտից կամ տախտակից՝ 12—15 մետր յերկարությամբ, 0,80 0,90 մետր լայնությամբ և 1,5 մետր խորությամբ։

Ավագաննի մուտքի կողմը պետք ե լինի ուղանայաց, իսկ յելքի կողմը՝ թեք և ուստիճանավոր (սանդղաձե)։

Ավաղանի յելքի առաջ պետք և սարքվի մի փոքր թեր հրապարակ՝ դեպի ավագանը:

Ավաղանի մոտ պետք և պատրաստի նաև սջախ մեկ կամ մի քանի կաթսայով, ընդամենն 90 դույլից վոչ պակաս ջրատարապությամբ՝ ջուր տաքացնելու համար կաթսան մի փայտյա կիսախօսդովակով միանում և մի մեծ տակառի հետ, վորուեղ ջրի հետ պետք և խաւնել հակաքոսային նյութերու Պատրաստիած լուծույթը տակառից տեղափոխվում և ավաղանի մեջ:



Նկ. 7. Քուավ վագրակված լոշիստիների լողացաւմն ափազանաւմ

Վաշխարներին լողացնելուց հետո նրանց մարմինը չարացնելու համար պետք և հատկացվի մի առանձին շինություն, վոր պետք և բաղկացած լինի 4—5 բաժանմունքից:

Այդ շինությունը պետք և լավ ոգագոխելու հարմարություն ունենա և միջանցիկ քամիներից ազատ լինի:

Հակաքոսային ավաղանների համար կտրելի չե գործածել հետեւյալ լուծույթներից մեկն ու մեկը.

ա) Կրեալինի լուծույթ.— Ցուրաքանչյուր 100 լիտր (10 դույլ) ջրի մեջ պետք և խաւնել 2,5 կիլոգրամ կրեռովներ Զուրը պիտի լինի փափուակ (վոչ կոշա) և պիտի տաքացնել 40° ջերմ. ըստ Ցելսիուսի Պետք և գործածել միայն այն կրեռովնել, վորն ունի մարկա՝ ոպիտանի յե լողացնելու և բառման նպատակների համար:

բ) Լիզոլի լուծույթ.— 100 լիտր ջրի համար պետք և

վերցնել 2 կիլոգրամ լիդու և պատրաստել կրեոլինի լուծույթի նման, լողացման անվողությունը $1\frac{1}{2}$ —2 ըովեն:

գ) Ծխախոտի խառնվի.—7,5 կիլոգրամ ծխախոտ պետք եւ մանրել (կամ վերցնել 15 կգր ծխախոտի փոշի) և 50 լիտր ջրի մեջ մեկ ու կես ժամ յեռացնել և հետո թողնել վորոշ ժամանակ, մինչև պարզվի, իսկ հետո պետք եւ քամել: Ստացված հեղուկի վրա պետք եւ ավելացնել մեկ կիլոգրամ կարբողաթթու, մեկ կիլոգրամ կծու: Նատրիոն, կամ մեկ դույլ թունդ մոխրաջուր, ապա ավելացնել այնքան ջուր, վոր ստացվի 250 լիտր հեղուկի հեղուկի բարեխառնությունը պիտի լինի 35° ըստ Ցելսիուսի:

Լողացնելու տեղողությունն եւ 3 ըովեն:

դ) Ծծմբակրային լուծույթ (պոլիսուլֆիտներ).—Այս լուծույթը պատրաստելու համար պետք եւ վերցնել՝ կես մտս կիր (չոր և թարմ), մի մաս ծծումբ (չոր և լավ մանրած) և 4 մաս ջուր:

Այս լուծույթը պատրաստելու համար պետք եւ դործածել մաքուր, չոր և լավ մանրած ծծումբ (ավելի լավ ե՞ ծծմբածաղիկ): Կիրը նույնպես պիտի լինի չոր, թարմ և լավորակ, վոր հանդչելուց հետո ձյունանման սպիտակ դույն ունենա: Վատորակ կեր գործածեն արգելվում եւ:

Կրի կտորները պետք եւ դնել կաթսայի մեջ և հանգժնել $1/3$ մաս ջրով: Ցերը կրի կտորները փոշիանում են, նորից պետք եւ ավելացնել $1/4$ մաս ջուր, իսկ 5 ըովեն հետո՝ մացած ջուրը ($5/8$): Այս ձեռվ ստացված խառնուրդը (կրակաթը) պետք եւ տաքացնել, մինչև վոր նրա ջերմաստիճանը հասնի 75° -ի (Ցելսիուսի): Դրանից հետո նրա վրա քիչ-քիչ պետք եւ ավելացնել ծծումբ և խնամքով խառնել: Ստացված խառնուրդը կաթսայի մեջ պետք եւ յեփել վոչ ուժեղ կրակի վրա, մինչև յերկու ժամ (հաշվելով յեռալու ժոմմեննոլից), և յեփելու ժամանակ վրան շարունակ ջուր ավելացնել այն հաշվով, վոր կաթսայում խառնուրդը

մակ երեսը մնա միշտ նույնը։ Այդ խառնուրդը, վոր սկզբում թեթև դեղնավուն գույն ունի, աստիճանաբար դառնամ ե դեղին, հետո՝ կարմրավուն և, վերջապես՝ մուգ-կարմիր։ Դրանից հետո խառնուրդն առնվազն մի ժամ պետք ե թունել, վոր սառի և ալարդիվ, վորից հետո նրա վերին չերտը (հեղուկը) պետք ե ռետինե խողովակով (սիֆոնով) քաշել, առանց տականքը խառնելու։

Վերոհիշյալ ձևով ստացված մուգ-կարմրավուն հեղուկը պոլիսուլֆիաների խտացած լուծույթն է, վոր գործածվում ե ջրի հետ, հետեւյալ ցուցակի համաձայն։

Հրի շերմասինանը

Պոլիսուլֆիաների խտացած լուծույթի համար 100 լիոր ընկ համար

37-ից	մինչև	30°-Ը	25 լիոր
30 >	>	23°->	3,25 >
26 >	>	24°->	5,5 >
24 >	>	23°->	4,0 >
22 >	>	20°->	4,5 >
20 >	>	18,5°->	5,0 >
18,5 >	>	17°->	5,5 >
17 >	>	16°->	6,0 >
16 >	>	15°->	7,0 >
15 >	>	14°->	8,0 >
14 >	>	13°->	8,5 >
13 >	>	12°->	9,0 >
12 >	>	11°->	10,0 >

Անասունին լողացնելու համար թույլատրվում է գործածել միայն 37 -ից մինչև 25° C (օնելսիուսի) ջերմաստիճանի լուծույթ, իսկ այնուվեց ցածր ջերմաստիճանի լուծույթը կարելի յե գործածել աեղական բուժման համար։

Քուռվ շատ վարակված վայշարների բուժման համար ծծմբակրային (պոլիսուլֆիտային) լուծույթի մեջ կարելի լե խառնել նաև կրեոլինի մինչև 10° C-ը։

ՎԵՐՆԱՄՐՆԵՐԻ ԼՈՂԱՑՈՒՄԸ

Վոշիարները, իրեն կանոն, պետք ե լողացվեն խուզելուց 8—10 որ հետո՝ տաք յեղանակին, քամի չեղած

ժամանակը, իսկ յեթե անհրաժեշտ ե լողացնել ցուրտ յեղանակներին, այն դեպքում պետք ե ընտրել տաք և հանդարտ որեր՝ հատուկ տաքացրած շենքերի մեջ:

Յեթե մի խօրանտեսությունում կամ կոլտնտեսությունում քոս ե առաջանում և լողացնում են վոչխարներին, այլայլ վայրում գտնվող մննանատեսների բոլոր վոչխարները նույնպես պարտադիր կերպով պետք ե լողացվեն:

Լողացնելուց 3—4 որ առաջ քոսով վարակված, կամ կասկածելի հոտերը հատուկ քննության պետք ե յենթաքիլեն և հիվանդներն ու թույլերը պետք ե ջոկվեն: Լողացնելուց մեկ որ առաջ հիվանդ անասունների մարմնի վարակած մասերի վրա կանաչ սապոն պետք ե քսել (կանաչ սապոնի հետ կարելի յե խառնել կրեոլին կամ լիզոլ), հետեւյալ որը սապոնը դադչ ջրով լվանալ իսկ կեղենները փայտե գանակով քերել:

Վոչխարները պետք ե լողացնել սպած վիճակում, բայց լողանակուց 2—3 ժամ առաջ նրանք պետք ե ջրված լինեն, զորպեսզի ծարավ լինելու պատճառով ավաղանի հեղուկը չխմեն ու շթունավորվեն, իսկ հետո վոչխարները պետք ե քերել լողաբանի մոտ, վորպեսզի լողանակուց առաջ հանդստանան:

Առաջին հերթին պետք ե լողացնել առողջ վոչխարները, իսկ հետո՝ հիվանդները: Թոսով վարակված հղի մաքիններին հղիության յերկրորդ կիսին չպետք ե լողացնել: Նրանք պետք ե բուժվեն դադային կամերներում: Թույլ վոչխարները պետք ե լողացնել վերջին հերթին, լողացնելուց հետո պահել առանձին և բուժման ամբողջ տեղողության ընթացքում, յեթե լավ արատավայր չկա, լրացուցիչ կերպով խտացրած կեր տար Անգլայման պետք ե լողացնել նաև վոչխարների հոտի մնջ յեղած բոլոր այծերն ու շները: Գառները պետք ե լողացնել վոչխարների հետ միա-

ժամանակ, բայց վոչ թե նրանց ավագանի մեջ, այլ ձեռքով՝ մի կիսատակառի կամ տաշտի մեջ. նրանց համար դործածնելիք լուծույթը սովորականից $20-30\%$, թույլ պիտի լինի Այս նպատակով պետք է գործածնել նախապես ոդտագործված, բայց լավ քամված հակառակին լուծույթը:

Ավագանի հնդուկը պատրաստվում է 100 գոշխարին 250 լիտրի, իսկ յենե խուղված չեն՝ 300 լիտրի չափով:

Լողացնելու ժամանակ վոշխարները պետք եւ հավաքել լողարանի մոտ մի ցանկապատճ տեղ. պետք եւ նշանակել հատուկ մարդիկ և նրանց միջն բաժաննել աշխատանքը:

Դոչիարների մասսայական թունագործումը կանխելու նպատակով պատրաստված լուծույթը նտխապես պետք է փորձել 5—10 գլուխս սակավաթեք վոշխարների վրա: Այդ վոշխարները փորձնական լողացումից հետո առնվազն 8 ժամ պետք է ողանել մի ծածկի տակ՝ մշտական հսկողության տակ: Նայած փորձի յենթաքեած անաստանուերի առողջական դրության՝ պատրաստված լուծույթի խոռությունը պետք է ուժեղացնել, կամ թուլացնել, և նորից փորձել յերկրորդ փորձնական խմբի վրա: Ուժեղ եւ համարվում այն լուծույթը, յերբ նրա մեջ լողացնելուց հետո վոշխարներն ընկնում են ընկճված դրության մեջ, բերնից փրկվուր և վագում, դրդում են, յերերակով են քայլում, փոխում են և այլն: Նորմալ եւ համարվում այն լուծույթը, յերբ վոշխարները լողարանից դուրս են գալիս թեև թուլացած, ընկճված, սոկայն թունագործան վերսիշյալ նշանները չեն նկատվում: Իսկ լուծույթը թույլ եւ համարվում, յերբ վոշխարների վրա նրա աղղեցությունը բարորովին չի նկատվում. այսպիսի լուծույթը քոսի տիպերի վրա կարող է չաղղել:

Վոշխարներին լողացնելու ամբողջ ժամանակվա ընթացքում պետք է հետևել, վոր լուծույթի խոռությունը չնվազի, ինչպես նաև լուծույթը շատ չկեղառավի:

Խողացնելու համար մի մարդ բռնում և ցանկապատի մեջ դանակած վոչխարներին և մի առ մի տայիս և լողարանի մատ կանգնած յերկու մարդկանց, վորոնք վոչխարը հետեւ կողմից զգուշությամբ իշխնում են լուծույթի մեջ՝ մինչև կուրօնը, վորից հետո բաց են թողնում յելքի ուղղությամբ։ Ամաղանի յերկու կողմը կանգնած մարդիկ ձողերի ողնությամբ վոչխարի գլուխը պետք և պահեն լուծույթից դուրս, վորպեսդի շխեղամի, իսկ յելքի մոտ նրանց դլուխը 2—3 անգամ պետք և սուղել հեղուկի մեջ։ Առանց վոչխարի դլուխն ու մեջքը թրջելու, ափաղանից չպետք և դուրս հանել։

Վաչխարը լողարանում պիտի մատ ընդամենը մեկ ու կես—յերկու բողեք, իսկ յեթե չի խռովված՝ մեկ—մեկ ու կես բողեք։

Խողարանից դուրս գալուց հետո վոչխարը շենքի յերեց առաջ դանցող հրապարակում անցնում և յերկու բանվորի ձեռքով, փորձնէ հակառակային լուծույթով թթված խողանակով պետք և շփմն նրա տերողջ մարմինը՝ հատուկ ուղղության դարձնելով վարակված մասերը։ պետք և շորով շիել նաև վոչխարի ականջների ներքին մակերեսը։ Դըրանից հետո վոչխարներն այդ հրապարակում մնում են 20 բողեք, վորպեսդի նրանց վրայից հեղուկը բամսի, վորից հետո տարրում են հատուկ պատրաստված շինություն, վորը, ինչպես վերելում առեցինը, պետք և ունենա 4—5 բաժանմանց։ Վաշխարները պետք և տանել առաջին բաժանմունք, իսկ յերբ այդ բաժանմունքը լցվում ե, պետք և տանել յերկրորդ բաժանմունքը, իսկ նրանց տեղոն առանցին բաժանմունքը պետք և բերել ափաղանից դուրս բերված նոր վոչխարները։ և այսպես նրանց անցնում են մինչև վերջին բաժանմունքը։ Այդ բաժանմունքներում վոչխարների վրայից քամիւում և նրանց վրա մասցած հեղուկը, և մարմին մակերեսն աստիճանաբար չօրանում ե, և վորովհետեւ առաջին 3—4 բաժանմունքներում վոչխար-

ներն ամելի յեն թրջվում, դրա համար ել հատակի վրա սկսար և ամելի առատ ցամբար փոեր, վերջին բաժանմունքն ամենից չորն և լինում, վորանդ վոչխարները մնում են մինչև հետեւյալ առավուտը Վոչխարներին այս շինության մեջ չպետք և կերակրել, վորովինեաւն նրանց վրայից քամիւծ լուծույթից կերը կարող և թունավորվել:

Լողացնելու ժամանակ թունավորված վոչխարները, յեթե լինում են այդպիսիները, պետք է դուրս բերել մաքուր ողի մեջ, ողուխն ու մաքմինը մաքուր ու սառը ջրով վողողել և 25,0—50,0 գրամ լուծողական (անդիտական աղ) տալ Փորն ուսչելու դեպքում պետք և ծղուով արորել, իսկ ծայրանեղ գեպքում կարելի յե քաղցափոսի մեջ տեղից թափանը ծակել արուակար կոչված գործիքի միջնցով, վերջինու մի քիչ տոած և դեպի ներս թեքելով: Լողացած վոչխարների վրա պետք և սահմանել մշտական հակողություն և, անհրաժեշտության դեպքում, նրանց սպնություն ցույց տալ:

Առավոտյան լողացածներին յերեկոյան, յերբ շուկա անցնում և, կարելի յե մի ժամով արոտավայր ուղարկել, իսկ ջրել կարելի յե բացությա՞ իրենց ուզածին շալու լողանալուց 1—2 որ հետո, յերբ վոչխարների մաքմինը լավ չօրացած և լինում, կարելի յե նրանց տանել արածելու, սակայն առաջին 3 որը դիշերները դուրսը չպետք և թողնել:

Տարբեր որերում լողացրած վոչխարներին իրար հետ չպետք և խառնել, և պետք և հետեւ գոր նրանք իրար հետ վոչ մի շփում չունենան:

Լողացրած վոչխարներն 8—10 որ հետո պետք և միևնույն ձևով նորից, իսկ կարիք յեղած գեպքում նաև լողացնել 3-ըդ անդամ: Վերջին լողացումից 10 որ հետո միայն նրանց կարելի յե ուղարկել հեռու արոտավայրեր: Լողացրած վոչխարները պետք և պահել ախտահանված

փարախներում, դոմերում կամ չվարակված արոտավայրերում:

Քսովվ վարակված վայրերում, իրքև կանոն, վոշաբները առարին յերկու անգամ պետք եւ լողացնել մեկը՝ դարնանը, նրանց խուզելուց հետո, իսկ մյուսը՝ աշնանը, արոտավայրից վերադառնալու ժամանակ:

ԱԽՏԱՀԱՆՈՒՄ

Բավական չեւ քոսով հիվանդ անառուներին բժշկել, պետք եւ այնպես անել, զոր քոս առաջացնող տիզերը բոլորովին վոչնչանան: Գոմերը, փարախները, հիվանդ անառուների հետ շփման մեջ զտնված իրերը մշտական աղբյուր են քոսի տարածման, հետևաբար՝ տուղջ կած քուժված անառուներ, յեթեն բերվի վարակված շինությունը, կամ շփում ունենա վարակված իրերի հետ, անպայման կվարակվի քոսով: Միևնույնը պետք եւ տսել նաև վարակված արոտավայրերի նկատմամբ: Այն արոտավայրում, ուր քոսով հիվանդ անառուներ են զտնվում, արածող առողջ անառունն անպայման կվարակվի քոսով: Այս պատճառով ել անհրաժեշտ եւ վարակված շինություններն ու իրերն անպայման: ախտահանել, իսկ վարակված արոտավայրերն անվաս դարձնել:

Շինություններն ախտահանելու համար, նրանց հատակին զտնվող աղբիւ շերաը 15—20 սանտիմետր խորությամբ պետք եւ քերել, տանել դաշտ և այնտեղ թաղել, կամ մի ցանկապատած տեղում կույտերով դիղել. հետադայում կարելի յեւ նրանից աթար պատրաստել վարակված ցամքարը պետք եւ այրել: Շինության պատերն ու տախտակյամասերը պետք կրակաթով կամ քլորակը լովարակված ախտահանել, կամ սրսկել 3—5 ° սև կարսոլաթթվի լուծույթով:

Կրակաթը հետևյալ ձևով եւ պատրաստվում:

Մեկ դույլ կրակաթ պատրաստելու համար 2,5 կիլո-

պրամ չհանգած կիր պետք ե լցնել մի խոր ամանի՝ տաշտի կամ տակառի մեջ ու վրան մի քիչ ջուր ավելացնել և զգուշությամբ ու դանդաղորեն խառնելու կրի կտորները տաքանում են, գոլորշի յե առաջանում, և կիրը փոշու յե վերածվում։ Փոշիացած կրի վրա, շարումակ խառնելով, պետք ե ավելացնել անհրաժեշտ քանակությամբ ջուր, մինչև վոր ստացվի մեկ դույլ սպիտակ լուծույթ, վորը կոչվում է կրակաթ։ Կրակաթն առեն անդամ պետք և պատրաստել թարմ և այն չափով, վորը ան անհրաժեշտ է։ Հաջորդ օրվան մնացած կրակաթն արդեն կորցնում է տիղ վոչնչացնելու հառկությունը։

Քրորակիրը կարլի յե գործածել թանձը (մեկ մաս քլորուիր և 2 մաս ջուր), կամ հեղուկ քլորակաթի (մեկ մաս քլորակիր և քամն մաս ջուր) ձևով։ Քրորակը լուծույթները բացովյա և զգուշությամբ ողետք ե ողաքաստել, վորովհետև նրանցից բարձրացող քլոր-դաղի միջնորդ կարելի յե թունափորվելու Քրորակրակ ախտահանում կատարելուց հետո դռները և լուսամատները պետք ե բանալ և այնուհետ անասուն շթոդնել, մինչև վոր քլոր-դաղի հոտը բոլորովին վերանաւ։

Վարչակած շինության մեջ դանուող բոլոր տախտակյա մասերը՝ մառաները, տաշաերը, և այլն պետք ե լվանալ տաք և թունդ մսխրաջրով։

Մոխրաջուր պատրաստելու համար մի դույլ (10 լիտր) ջրի մեջ պետք ե խառնել 1600 գրամ վայափ կամ խոտի մոխրիր և յեփելու սառեցնելուց հետո զգուշությամբ քամելու Ստացված մոխրաջուրը դործածելու ժամանակ ողետք և խառնել յերեք մաս ջրով։

Ցերկաթյա իրերն ախտահանելու համար պետք ե այրել կրակի վրա, իսկ վայայա մասերը՝ մոխրաջրով լվանալու քլորակաթ կամ կրակաթ քսելու։

Այն բոլոր իրերը, վորոնք դիմանում են յեռացման, պետք և ախտահանել 5—10 րոպե տևողությամբ:

Վարակված անասուններին խնամող անձնակազմի հագուստները պետք և յեռացնելով ախտահանել, արդուկակել, կամ դադային կամերի միջոցով ախտահանել: Ձեռքերը կարելի յե ախտահանել 2 % կրեոլինի, կամ լիոնի լուծույժով և գաղջ ջրով ու սապնով լվանար:

Վարակված արոտավայրերում 2—3 ամիս վոչ մի անասուն չըլետք և թողնել արածելու: Այդ ժամանակին ընթացքում ախղերն ինքնարերարար կարող են վոչնչանալ:

ՅԵԶՐԻԿԱՑՈՒԹՅԱՆ

Քոսոր սոցիալիստական անասնապահության մեջ գոյություն չպիտի՝ ունենա: Նրա դեմ պիտի կազմակերպվի անհրաժեշտ և սիստեմատիկ պայքար: Մնանապահության այդ չարիքը, անկուլտուրականության այդ ներառությունը չերացնելու համար պետք և ողտագործվեն բոլոր հնարավոր միջոցները: Քոսի դեմ պայքարը միայն անասնաբուժական կաղմի գործը չե, այդ պայքարում ամենասերտ մասնակցություն ոլիտի ունենան վողջ աշխատավորությունը, բոլոր տեղական կուսակցական, կոմյերիտական, հաստրակական կազմակերպությունները: Քոսի լիակատար վոչնչացումն անասնապահության դծով աշխատող բոլոր մասնադիտների, անասնաբուժների, զոռակելմնիկների, գյուղատնտեսների, կոլտանտեսականների և ամբողջ աշխատավորության պատվի գործը պիտի լինի:

Յուրաքանչյուր դյուղում, կոլտնաեսության մեջ կամ ֆերմայում բոս հայտարերելու վեպքում անմիջապես պետք և կապ հաստատել տեղի անասնաբուժի հետ և նրա դեկավարության տակ կիրառել բոլոր հնարավոր միջոցառությունը՝ ամենակարճ ժամանակվա ընթացքում այդ շարիքը վերացնելու համար: Իսկ քոսից աղատ վայրերում


պետք եւ կիրառել այն բոլոր միջոցառումները, վորոնց
շնորհիվ կարելի յե քոսի մուտքը կանխել, կամ նրա տա-
րածման առաջն առնել՝ անխնա պայքարելով քոմն անդի-
տակցարար թե դիտավարյալ կերպով տարածողների դեմ:

Քոսի դեմ պայքարի հիմնական միջոցներն են՝ մաք-
րությունը, ախտահանումը և նախազդուչությունը, իսկ
այս միանգամայն հնարավոր եւ:

ԲՐԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Ինչ և քոսը	3
2. Զիերի քոսը	5
3. Վաշխարների քոսը	6
4. Խոշոր յեղջուրավոր անասունների քոսը	8
5. Քոսի տարածումը	9
6. Պայքար քոսի գեմ	9
7. Նախազգուշական միջոցներ	9
8. Ինչ պետք է անել, յերբ արդեն մի անասության մեջ քոս և հայտարերվել	11
9. Քոսի բուժումը	11
10. Մասսաւական բուժման միջոցները	15
11. Դաղային կամերներ	15
12. Հակաքոսային ավաղան	17
13. Վաշխարների լողացումը	20
14. Ախտահանում	25
15. Ցեղը ակացություն	27





Գումարագիր՝ Անվանյան
Տեխ. իմբուղիք՝ Սարոյան

Հեղին. բաժք՝ Ար. Գրիգորյան
Սբուազրիկ՝ Դուք. Հանդիպուն

Հայոց. № 116

Թայյլառարգան և Պատմահանդիպուն № 227
Գառագիր № 20

Տիպութ 3000

Հանձնված է պատմահանդիպուն 1934 թ. դեկտ, 25-ին
Սարագրագան է տպագրելու 1935 թ. հունվարի 25-ին

Տեղափառ. Գյուղական առաջնորդ, Խովհանովյան № 50

ԳԱԱ Վիմասրաբ Գիտ. Գրադ.



FL0001974

ԴՐԱՆ Ե ՅՈ ԿՈՂ.

A II
24315

ՕՏԿ.



6

Р. АРМЕНЯН

Чесотка домашних животных

Сельхозгиз

1935

Երևան